

պիտի ստիպուիս, քսաներկու տարի վերջ, փնտուել թթենիին տակ նետած պա-
յուսակդ...

— Հոգ չէ՛, կ'առնեմ, կը սորվիմ...

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ թէ կորուսեալ Հայրենիքին հասնելու հա-
մար մեր բոլորիս բնեւիք զոհողութիւններուն մէջէն՝ դերագոյնը պիտի ըլլայ
կալենցի այս «կը սորվիմ»ը...

Կալենց: Յարութի՛ւն Կալենց: Լաւ միտք պահեցէք այս անունը: Օր մը
իր ձայնը պիտի գայ հեռուներէն, շա՛տ հեռուներէն ու բարձրէն...

Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

2.— ԿԱԼԵՆՑԻ ԵՐԳԸ

Կեանքի ու բնութեան մէջ կը հանդիպինք երեւոյթներու, որոնք ան-
ջնջելի աղաւորութիւն կը թողուն մեր վրայ: Այդ արդիւնքն է մեր ներքին,
զգացական աշխարհին ու անտեսանելի իրականութեան հարադատ բախշու-
մին: Արուեստի հոգեհարսդատ երկը նոյն ձեւով կը գրոշմուի ու կ'ապրի
մարդուն մէջ:

Հանրասոցեալութեան ցուցահանդէսներուն՝ դեղանկարիչ Յարութիւն
Կալենցի կտաւներ, շատ անգամներ այդպէս են ներդործեր մեր վրայ: Թե-
րեւս այս իսկ պատճառով պէտք է բացատրել անոր դործերը ի մի հաւաքուած
տեսներու արուեստադէտներուն վաղեմի ցանկութիւնը:

Եւ ահա, սիրելի նկարիչին մահէն չորս տարի յետոյ, անոր ծննդեան
60-ամեակին առթիւ, Հայաստանի նկարչի տան երկու բնդարձակ դահլիճնե-
րուն մէջ բացուեցաւ անոր անհատական պատկերահանդէսը, որ կարելի է
ամբողջական համարել: Այդտեղ ներկայացուած էր շուրջ երկու հարիւր
դործ՝ գծանկարներ, ջրաներկեր, գեղանկարներ, որոնց զգալի մասը հաւա-
քուած է Սովետական Միութեան գանազան քաղաքներէն:

Արուեստի ճշմարիտ երկը իր ստեղծագործական ընթացքին մէջ մարդ-
կային ներքին ապրուած յոյզերու հայելին է: Կալենցի աշխատանքները դի-
տելու ժամանակ այս միտքը անբաժան է մեզմէ: Իր լուսադոյն կտաւներուն
մէջ, Կալենցը մեզ կը ներկայանայ իր տաղանդին բովանդակ վառով:

Յուցահանդէսին, այցելուներու առաջինը «կ'ողջունէր» Կալենցի վեր-
ջին դործը՝ «Գարունը մեր բակում» բնանկարը: Դեռ մահէն քսնի մը ժամ
առաջ նկարիչին վրձինը հպեր էր այս կտաւին: Նկարի ուղիղ կեդրոնին պատ-
կերուած է խաչքար մը, անոր մօտ՝ սալոք, նստարան: Հեռուն ուրուա-
զժուած է բարձրախորհ շէնք մը: Ու այս ամէնը, տեղակ մը դրկուած է նո-
բարողրոջ ծաւերով: Այն ինչ որ կ'երեւի կտաւի վրայ, նորութիւն չէ դիտո-
ղին համար: Սակայն ծանօթ տեսանելի ներկայացուեր է գունազծային այն-
պիսի կառուցուածքով, որ կը դրաւ անմիջապէս, կը հաղորդէ ինչ-որ ան-
մեկնելի քնարականութիւն մը: Կտաւը կարծես կը ծածանի նրբերանդ դոյնե-
րու ներդաշնակութեան մէջ: Եւ կը թուի, թէ նկարիչը ազօթք կ'ընէ խորանին
առջեւ: Խորանը Հայրենիքն է, իսկ ազօթքը՝ անոր ձօնուած երգ մը, որ ան
հաղորդեր է արգէն՝ ամբողջ ուժով:

Առաջինը՝ որով իսկոյն կը տպաւորեն Կալենցի կտաւները, գայնն է,
գունաշխարհը: Մեզ՝ Հայ նկարիչներու զարմանալի չի թուիր այդ աշխար-

չը, սրովհետեւ ըստ լուսնի զոյները հարազատ են մեզի, մեր բնութեան եւ ժողովուրդի ոգիին :

Իւրաքանչիւր նկարիչ, սակայն, ունի իր զոյնը երբնագրային իր մտածելակերպը, որ նախ սկզբունք է եւ ապա արուեստագէտի նկարագիրը, անոր անհատականութեան որոշիչը : Կալենցի գեղանկարչութեան մտածելակերպը կը մեկնի պայծառաւորութիւնէն : Սակայն, իր մօտ զոյնի ակունքը նիւթը է : Անոր գունանկարը կտաւի մակերեսին կը ստեղծէ թեթեւ, վճիտ, կարծես շղարշային մթնոլորտ : Կալենց տեսածը կը վերամարմնաւորէ վրձինի շոյող հպումներով : Ան կը ձգտի գոյներու այնպիսի յարաբերութիւններու, որոնք իր երգին կրնան տալ քնքուշ, բերկրալի քնարականութիւն :

Կալենցի երգը խոր արմատներ ունի : Նկարիչը աշխարհ եկաւ, երբ հայրենիքին սուգ կը սպասէր. հասակ առաւ ժողովուրդի դողաթափ ճամբուն վրայ, կորսնցուց ծնողները, ապրեցաւ սրբանոցի մէջ : «Մանկութիւն չունեցած» նկարիչը հողիին մէջ պիտի պահէր մեծ վիշտը, ինչպէս իր սերունդէն շատ ու շատ արուեստագէտները :

Սփիւռքահայ նկարիչները (եւ ոչ միայն նկարիչը) անցեր են կեանքի ու ստեղծագործութեան բարդ ճամբայ : Այդ սերունդը աշխարհ մտաւ հողեկան մեծ տատապանքով, տատապանք՝ որ կու դար հեռուներէն, սակայն 1915էն յետոյ դարձաւ նկարագիր, հետադնդող միտք : Եւ սփիւռքի մէջ ապրած ու ապրող մեր յուսուցիչ գեղանկարիչները՝ Պետրոս Գոնատուրաճեանը, Գառզուն, Ժանսեմը՝ Ֆրանսա, Ժիրայր Օրադեանը՝ Իտալիա, Արշիլ Կորջին՝ Ամերիկա, Իրիզանը՝ Քոլորադոյէն, Օննիկ Աւետիսեանը, Յակոբ Յակոբեանը՝ Եգիպտոս եւ ուրիշներ, իրենց ստեղծագործութեան մէջ այս կամ այն ձևով արձագանգներ են մայր ժողովուրդի վիշտին : Եւ շատ յաճախ, քաղաքակրթութեան այսօրուայ սանձարձակութիւններուն, պատերազմներու սղբերգութեան մէջ ձուլուելով, այդ թեման ստացեր է համամարդկային հնչեղութիւն :

Յարութիւն Կալենցը իր սերունդին ա'յն գեղանկարիչն է, որ ստեղծագործութեան բոլոր էջերուն մէջ, ծանր յուշերէն այլ երգ է հիւսեր : Վիշտի փոխարէն, Կալենցը երգեր է սէր, ախրութեան փոխարէն՝ ժպիտ, դորշ ամպերու տակէն տեսեր է պայծառ, լուսաշող երկինքը : Իր ամբողջ ստեղծագործութեամբ, ան մեզի կը ներկայանայ իբրեւ բանաստեղծ մը, որուն համար սուգ են կեանքն ու բնութիւնը, գեղեցկութիւնն ու անդորրը, երջանկութիւնն ու երազանքը : Եւ եթէ կայ նաեւ թախիժ անոր գունապեղ կտաներուն, գիմանկարներուն վրայ, այդ սակայն պայծառ թախիժ է, լուս երկիւղածութիւն՝ կեանքի հրանելի անդորրին հանդէպ : Այս աշխարհադրացողութիւնը պատահական է Կալենցի համար : Այդ մեր ժողովուրդին զարեբութիւն կոփուած անմեկնելի կենսասիրութեան վկայութիւնն է, ժողովուրդ՝ որ միշտ իր գոյութիւնն է պահպաներ, հաստատելով կեանքի գեղեցկութիւնը : Այս զգացողութիւնն էր, որ ճառագայթեց Սարեանի արուեստին մէջ, եւ իր ուրոյն, միանդամայն տարբեր արտայայտութիւնը դառաւ սփիւռք-հայրենիք ճամբան անցած Կալենց - քնարերգուի ստեղծագործութեան մէջ :

Յարութիւն Կալենցի արուեստը՝ ղիտողին առաջին անգամ կը կաշռէ իր արդիականութեամբ, քարմուքեամբ : Անոր կտաւները կարծես կ'աղբին տեսակ մը մօլորուր, զով շունչով : Կալենցի ստեղծագործութեան բարձր արժէքը պէտք է տեսնել ինքնատիպութեան մէջ : Անոր անհատականութիւնը կու գայ իր բնածին տաղանդէն : Կալենցը նկարիչ էր ծնուելու եւ իր տաղանդը ի յայտ բերեր խիստ երիտասարդ հասակին : Ահա դէպք մը պատանեկութեան

տարիներէն, որ յուզմունքով եւ երախտադիտութեամբ կը յիշէր նկարիչը, յաճախ:

Հոռմի դեղարուեստական սկզբնական աւարտած Օննիկ Աւետիսեան եւ կեր էր Հայէս: Անոր շուրջը կը հաւաքուին կարգ մը շնորհալի աշակերտներ, որոնց մէջ էր նաեւ Կալենցը: Տեսնելով Կալենցի մէկ էտիւտը, Աւետիսեան կը դնէ դաջն եւ կ'ըսէ. «այլեւս ուսման վարձ չես վճարեր»: Կալենցի տաղանդին տուջին գնահատութիւնն էր սո՛յդ: Մասնադէտը կը սեսնէ եւ կը խրախուսէ, որ պատանին շարունակէ նկարել այնպէս, ինչպէս կը զգայ: Այդպէս ալ Կալենց սկիզբնական կըթուփուի շատացաւ: Իր միւս «ուսուցիչը» Փրանսացի Կ. Միլլըլէն, յետագային զրկեց. «Կալենցը եղաւ աշխատելու իմ արուեստանոցը եւ դարձաւ իմ ուսուցիչը»: Հայ երիտասարդը կեանքի իր սեփական ընկալումն ունէր եւ դանոնք կ'իրականացնէր սեփական զգացողութիւններով, ատոր շնորհիւ արագ ձեւաւորուեց անոր անհատական ոգը:

Կալենցի ինքնուրոյնութիւնը կը շօշափէ միաժամանակ արդիական արուեստի ոլորտը: Ան կը պատկանի «գաւառային» նկարիչներու շարքին: Ինչպէս արդէն ըսուեցաւ կալենցեան գոյնի սկզբնական նիւթը չէ: Գոյնը՝ ինչպէս երաժիշտին մօտ մեղեդին, նկարիչի ներաշխարհին ծնունդն է, հոգիին անմիջական թարգմանը: Այդ հանդամանքը անոր կու տայ կտաւի մակերեսը ազատօրէն կազմակերպելու լայն հնարաւորութիւն: Ստեղծագործութեան ամբողջ ճանապարհի ընթացքին Կալենցի գլխաւոր խնդիրը եղեր են գունաւոր արտայայտիչ մակերեսներու որոնումն ու անոնց հարմարեցումները: Եւ ան անընդհատ ապրեր է ստեղծագործական աճում, իսկ կեանքի վերջին տարիներուն ստեղծեր իր մտայնացումները սպառող կատարեալ գործեր:

«Գարունը», «Ծառ Անգուլի ձորում», «Աշունը Հրազդանի արիւթին», «Ծաղիկներ», «Գարունը մեր բախում» եւ ուրիշ կտաւներ լրիւ կը պատկերացնեն Կալենցի ստեղծագործական սկզբնական տարրերը: Երիտասարդ շրջանի գործերուն մէջ, կարելի է նկատել, որ նկարիչի գիծը առաւելապէս կու տայ բնութեան տարրերու ճշգրիտ ձեւերը: Այս աշխատանքներուն մէջ դժանկարն աւելի անկախ է, ընհանրացուած: Գիծը ձերբազատուած է իրականութեան արտաքին երեւոյթներէն եւ շողկապուելով գաւառային հարթ մակերեսներուն, վերածուեր է արտայայտիչ, ինքնատիպ ձեւերու (Փորձաներու), «Ծառ Անգուլի ձորում» նկարը, օրինակ, այդ ձեւերը գունային եւ բլրատիկ արտայայտչականութեամբ խտացուցեր է դարձանային արամադրութիւնը: Կտաւն ամբողջացուցեր է գունա-դժային ընդհանրացուած ձեւերու հաւասարակշիռ տեղաբաշխութեամբ: Կանանչով, դեղինով, բաց վարդագոյնով ստեղծուած գունային պարզ կոտորածով, անմիջականօրէն կը դրսեւորէ խոր զգացմունք: Այսպէս, նկարիչն իր նպատակին կը հասնի «մաքուր գեղանկարչութեամբ» եւ միշտ իր ուժեղ կողմը կը դրսեւորէ չափի անսխալ զգացողութեամբ, որ անոր բարձր ճաշակին վկայութիւնն է:

Դիմանկարներուն մէջ բնորդի նմանութեան եւ հոգեկան բացայայտման պարագան, կը թուի թէ ինչ-որ չափով պիտի կաշկանդէ նկարիչը: Սա կայն. ընդհակառակը: Մ. Պլիսեցկայայի, Ա. Գիտովիչի, Ա. Գարբիէլեանի, Բ. Յովհաննիսեանի, Ա. Թովուզիանի եւ ուրիշներու դիմանկարներուն մէջ Կալենցը մեկ կը ներկայանայ իբրեւ այդ ժամրի խիստ իւրօրինակ վարպետը: Ան սուր է եւ սպաւորիչ, կ'որոտայ մարդկային նկարողիւրը, աւանց չեղելու պատկերը բլրատիկ ձեւերով կազմակերպելու իր մեթոտէն: Ուշուրիւր դիտելով կարելի է տեսնել, որ բնորդի մարմինի կամ դէմքի առանձին հատուածնե-

բուճիչ ծառայները նկարիչը չի խախտեր, բայց դանոնք կը ներկայացնէ սպառնալից գոյններով ունեցող ընհանրացուած ձեւերով: Ա. Գիտովիչի զմեռնըկարին վրայ, օրինակ, դէմքի երկու մասերը լուծուած են բացուած գիւրջ շիշեցնող դուռային լուսաստի մակերեսներով: Եւ դրողի խոր ու խոհուն հայեացքը, կ'ըսես իր դիրքի տողերէն կը նայի: Զուժակահար Գարրիէլեանի, սարուհի Պլիսիցկայային, Փիլիպոս Ալիխանեանին մենք կը տեսնենք իրենց էութիւնը ամփոփող դուռա-դձային կալենցեան կառուցուածքովը:

Գունային հարթ մակերեսներով սրտակեր կառուցանելու կալենցի դեպուստակաւ մտածելակերպը սերտ կապ ունի արդի նկարչութեան «գունալիներու» ասանդներուն հետ: Սակայն, ասով հանդերձ, կալենցն ինքնուրոյն է, ունի իր դէմքը, ընթացքը է սեփական ուղիով:

Առիթով մը անոր մասին գրեր են. «Եթէ կալենցը Եւրոպա դանուէր, ան կը դառնար նոյնքան հանրայայտ, որքան Գառուէն եւ Ժանսեմը»: Ճանչնալով կալենցը, չենք տարակուսիր: Սակայն Եւրոպական մակարդակի դործեր ստեղծելու համար, կալենցը Փարիզ ապրելու պէտք չունեցաւ, Հայաստանը բաւական էր իրեն: Աւելին, հայրենի երկիրն էր անոր ստեղծագործութեան բուն պատուանդանը:

Յիշենք, որ մեր ազգային մշակոյթը իր դորդացման ճամբուն վրայ, չհաշուած պատմական ծանր պայմաններու սրբապարծ է կանգունները, քաղեր է համամարդկային մշակոյթի զարգացումին գուղընթաց: Բայց, ատոր հետ մէկտեղ, ինչպէս հին շրջանին, այնպէս ալ այսօր, մեր արուեստը պահպաներ է իր ազգային դէմքը: Ազգային արուեստի մասին խորհրդածելու պահուն, դժուար է անտեսել այս հանդամանքը: կալենցի լաւագոյն դործերը, այո՛, ունին բարձր մակարդակ: Եւ անոր ստեղծագործութիւնը մեզ համար թանկ է նախ եւ առաջ անով, որ ան եզակի տեղ ունի արդի հայ դեղանկարչութեան մէջ, հարստացուցեր է դայն, կաղմեր՝ պայծառ մէկ էջը անոր:

Ինչպէս ամէն մարդ, արուեստագէտն ալ իր կենսագրութիւնը ունի եւ ան կ'արտայայտուի իր սպրած իւրաքանչիւր պահի մէջ: Կը նայինք կալենցի բնանկարներուն եւ կը տեսնենք բնութիւնը շղարչ հաղած, անադարտ ու ջիւղ: Կը տեսնենք դոյններ, սրունք կը շնչեն ազատ կեանքով: Կ'ապրինք մարտ բարի զղացումներով:

Կը նայինք անոր նասիւր-մարտնեքուն եւ կը տեսնենք նոյն պարզութիւնը: Մեզ կը պարուրէ մանկական հրճուանքն ու թեթեւութիւնը, մեզ կը հարգուին բնութեան դեղեցկութիւններով ապրող նկարիչի ազնիւ յոյզերը: Կը նայինք անոր զիմանկարներուն ու մեր առջեւ կու գան հոգեկանով հարուստ մարդիկ: Եւ նրբազեղ գոյնները մեզ կը յուշեն մարդուն հանդէպ նկարիչին տածած խոր սէրն ու հաւատքը...

Կալենցի աշխարհն է ա՛յս, որ բնութեան նման հարադատցեր է մե՛զի, դարձեր մե՛րը:

«Ազիտ. Հայաստան» ամսագիր,
18-8-1972, Երեւան

ՇԱՀԷՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
(Արուեստարան)